Վարդն ու Երիցուկը

Մի օր Երիցուկը կանգնած էր դաշտում, նա նայեց Վարդին և ասաց:

—Վարդ, ես կարծում եմ, որ ես քեզնից ավելի սիրուն եմ:

Վարդը պատասխանեց,

—Ոչ ես շատ սիրունեմ, իսկ դու ոչինչ ես այս դաշտում:

Նրանք սկսեցին կռվել,

—Ես եմ սիրուն!

—Ոչ ես՝

Նրանք երկար կռվեցին, բայց հանկարծ Վարդն ասաց,

—Իսկ արի մենք հարցնենք դաշտի ամենա իմաստուն ծաղկին, թե ով է ավելի գեղեցիկ,

Երիցուկը պատասխանեց,

—Համաձայն եմ, բայց չլացես եթե նա ասի իմ՝ անունը:

Վարդը ջղայն նայեց նրան, բայց նրանք գնացին իմաստուն Զանգակի մոտ:

—Զանգակ, կարող ես ասել թե ով է մեզնից ամենա գեղեցիկը, ես գիտեմ, որ դա ես եմ, բայց ամեն դեպքում պետք է ստուգել:

Երիցուկը ջղայն արտաշնչեց և ասաց,

—դե՞ ասա արդեն, հաստատ ես եմ, չէ՞

Զանգակը նայեց երկուսին և պատասխանեց,

—Դուք երկուստ ել շատ գեղեցիկ եք, բայց չեմ կարծում, որ պետք է կռվել, ուղղակի խաղաղ ապրեք վերջ ի վերջ օ՝ մենք սովորական ծաղիկներ ենք:

ԱՌԱԿ